

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԻՐԱ ԻՇԽԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԴԱՐՁՎԱԾԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

Ժ.02.08 - «Ռոմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսությամբ

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռ. Մելիքսեթյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Բարլեզիզյան

բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ Վ.Պետրոսյան


Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. ապրիլի 15-ին, ժամը 11:00-ին ՀՀ ԲՈՅ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. մարտի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար Բ.Գ.Դ., պրոֆեսոր՝



Ե. Լ. Երզնկյան

Ժամանակակից ֆրանսերենը դասվում է վերլուծականության ընդգծված միտումներով օժտված լեզուների շարքին և նույնիսկ բնութագրվում որպես «analytique par excellence», այսինքն՝ գերազանցապես վերլուծական:

Լեզվաբանական տեսանկյունից ֆրանսերեն լեզվի պատմությունը լատինական համադրական համակարգի վերածումն է վերլուծական համակարգի: Մակայն, լեզվական համակարգի բնույթի արմատական փոփոխությունը դանդաղ, աստիճանական գործընթաց է, քանի որ լեզուն ունի երկակի բնույթ՝ այն կայուն է և միևնույն ժամանակ փոփոխվող:

Հին ֆրանսերենի շրջանում (IX–XIII դդ.) ֆրանսերենը համադրական համակարգ էր վերլուծական տարրերով, իսկ արդեն միջին ֆրանսերենի շրջանում (XIV–XV դդ.) այն դառնում է առավելապես վերլուծական: Ֆրանսերենը պատկանում է ժամանակակից լեզուների այն խմբին, որոնք առաջացել են ժողովրդական լատիներենի հիմքի վրա, և որոնց զարգացման ընդհանուր միտումները վերլուծական տարրերի կուտակումն է, որն իր արտահայտությունը գտնում է ինչպես ձևաբանության, այնպես էլ շարահյուսության մեջ: Ընդ որում, ֆրանսերենն այլ ժամանակակից լեզուների համեմատությամբ ամենաշատն է հետագել հիմք-լեզվից և դրանց մեջ համարվում է ամենավերլուծականը:

Շառլ Բալլին իր «Ընդհանուր լեզվաբանություն և ֆրանսերեն լեզվի հարցեր» աշխատության մեջ գրում է. «... այն, ինչը համադրական է լեզվի մի վիճակում, վերլուծական է եղել նրա մեկ այլ վիճակում և ընդհակառակը»¹: Լեզուն կայուն լինելով հանդերձ, գտնվում է մշտական շարժման մեջ: Լեզվական համակարգի այս առանձնահատկությունը, բնականաբար, իր դրսևորումներն է գտնում լեզվական տարբեր գործընթացների ու երևույթների մեջ:

Ասվածը վերաբերում է նաև ֆրանսերենի դարձվածակագրության միտումներին:

Սույն ատենախոսությունը նվիրված է **ֆրանսերենի դարձվածակագրության հիմնական միտումների** քննությանը: Այս հարցը մասնագիտական գրականության մեջ բավարար չափով լուսաբանված չէ: Ընդհանրապես, հետազոտողները դարձվածքներին վերաբերվել են որպես պատրաստի լեզվական միավորների՝ փորձելով դրանք ըստ հնարավորին տարանջատել այլ լեզվատարրերից: Ճիշտ է, շատ դեպքերում դարձվածքը նույնացվել է բառի հետ կամ համարվել բառի տարակազմ տարբերակ, այդուհանդերձ, դարձվածքի վերջնական աստիճանումը կարող է ընդարձակվել կամ նեղանալ՝ կախված կայուն բառակապակցության բնույթից: Մասնագիտական գրականության մեջ պատշաճ ուշադրություն չի դարձվել դարձվածքի կառուցվածքային և իմաստաբանական զարգացման առանձնահատկություններին, դարձվածակագրությունը չի դիտվել որպես ամբողջական շղթա, մինչդեռ, ինչպես ցույց է տրվում

¹ Տե՛ս **Балли Ш.** Общая лингвистика и вопросы французского языка. М., 1955, էջ 160:

ներկա ատենախոսության մեջ, դարձվածքների ձևավորումն ու զարգացումը ենթարկվում է հստակ օրինաչափությունների:

Դարձվածքները, որպես պատրաստի ձևով խոսքում վերարտադրվող միավորներ, անընդհատ ենթարկվում են ինչ-ինչ փոփոխությունների՝ կախված համատեքստից և ոճաբանական գործոններից: Սակայն, գոյություն ունեն ընդհանուր օրինաչափություններ, որոնք կապված են լեզվի զարգացման հետ և որոնք պայմանավորում են դարձվածակազմության հիմնական միտումները:

Թեմայի **արդիականությունը** նախ և առաջ պայմանավորված է վերը նշված հանգամանքներով: Բացի այդ, դարձվածաբանությունը ցանկացած լեզվի մեջ, ինպես նաև ֆրանսերենում, լեզվի կիրառության կարևոր ոլորտ է, որն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը և՛ դասավանդման մեջ, և՛ հաղորդակցության ոլորտում: Դարձվածաբանական միավորների կիրառության յուրահատկությունների վերհանումը կարող է մեծապես նպաստել հաղորդակցության արդյունավետության բարձրացմանը:

Ուսումնասիրության **առարկան** ֆրանսերենի դարձվածապաշարն է՝ լայն ընդգրկումով: Այս առումով հետազոտվել են ոչ միայն լիովին կամ մասնակիորեն վերախմաստավորված բառակապակցությունները (բուն դարձվածքները), այլ նաև բայական ու անվանական կայուն բառակապակցությունները՝ նյութի քննությունն ավելի ընդգրկուն ու համապարփակ և աշխատանքն ավելի ամբողջական դարձնելու նպատակով:

Ուսումնասիրության **նյութը** հիմնականում կազմում են.

1. Շուրջ 150 մեծաբառայինները, որոնք նախկինում եղել են դարձվածքներ:

2. Հին ֆրանսերենի շուրջ 1000 ամբողջական բառամիավորները (մեծաբառայինները) և արդի ֆրանսերենում դրանց բազմանդամ հոմանիշները, որոնք աշխատանքում ներկայացվում են որպես հավելված:

3. Դիավածային փոխակերպումների ենթարկված շուրջ երեք տասնյակ դարձվածքները:

Օրինակները քաղված են բառարանագրային աղբյուրներից, գեղարվեստական գրականությունից, մամուլից, դարձվածաբանությանը նվիրված աշխատություններից:

Աշխատանքի **նպատակն է** տարածամասնակյա մոտեցմամբ բացահայտել, դասակարգել և մեկնաբանել ֆրանսերենի դարձվածակազմությանն առնչվող հիմնական միտումների՝ **մեծաբառայինացման, բազմաբառայինացման և դիավածային փոխակերպումների** առանձնահատկությունները, որոնք իրարից առանձնացած չեն և կազմում են մեկ ամբողջություն:

Սույն նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- ճշգրտել ու հստակեցնել «դարձվածք» հասկացության էությունն ու լեզվական – լեզվաբանական առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ժամանակակից ֆրանսերենի դարձվածաբանական միավորների պատմական զարգացման յուրահատկությունները,
- քննել մեծաբառայինացումը՝ որպես դարձվածակազմությանն առնչվող կարևոր երևույթ,

- բացահայտել դարձվածքի՝ լեզվական այլ միավորների (բառի, նախադասության, առածի, սասցվածքի և այլն) հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները,
- մանրակրկիտ քննության ենթարկել բազմաբառույթացման երևույթը՝ որպես դարձվածակազմության հիմնական միտում ու դրսևորում,
- հետազոտել դիպվածային փոխակերպումները՝ դարձվածակազմության ընդհանուր գործընթացների շարքում:

Ուսումնասիրության **նորույթը** ֆրանսերենի դարձվածակազմության միտումների փոխակազմվածության վերհանումն է: Առաջին անգամ **մենաբառույթացումը, բազմաբառույթացումը** և **դիպվածային փոխակերպումները** դիտարկվում են իբրև դարձվածակազմական գործընթացի առանձին տարրեր, տրվում է դրանց սահմանումն ու մեկնաբանությունը, որոնք հաստատվում են բավարար քանակությամբ օրինակներով: Ատենախոսության մեջ դարձվածակազմությունը դիտարկվում է բառակազմության ընդհանուր գործընթացների շրջանակում, ցույց է տրվում **բառ-դարձվածք** և **դարձվածք-բառ** զարգացումների հաջորդականությունը:

Ուսումնասիրությունն ունի **տեսական նշանակություն**: Ֆրանսերենի դարձվածակազմական միտումների նորովի քննությունը առաջադրում է տեսական լուրջ խնդիրներ՝ կապված դարձվածքների ձևավորման և զարգացման առանձնահատկությունների հետ: Եթե դարձվածքը դիտվում է որպես բառի տարակազմ տարբերակ, արտահայտում է իմաստ և բաղկացած է մի շարք բաղադրիչներից, ապա իր հետագա զարգացման ընթացքում նրա կառուցվածքային ամբողջականությունը կարող է խտանալ, որի հետևանքով այն կարող է վերածվել բառի: Ուստի, տեսական առումով խիստ կարևոր է ֆրանսերենում **դարձվածք-բառ** և **բառ-դարձվածք** զարգացման ամբողջական պատկերի բացահայտումը:

Աշխատանքի **գործնական նշանակությունը** դարձվածքների կառուցվածքային և իմաստաբանական առանձնահատկությունների բացահայտումն է: Բացի այդ, ատենախոսության վերջին գլխում քննարկվում են ֆրանսերենի դարձվածքների դիպվածային փոխակերպումները և տրվում է դրանց հայերեն համարժեքների մեկնաբանությունը: Այսինքն՝ բացահայտվում են նաև ֆրանսերենի դարձվածքների հայերեն թարգմանության առանձնահատկությունները:

Աշխատությունը կարող է օգտակար լինել թարգմանիչների, ֆրանսերենի և հայերենի դարձվածաբանության հարցերով զբաղվողների համար, օգտագործվել բառագիտության և թարգմանության տեսության դասընթացներում և բառարանագրության մեջ:

Սույն աշխատանքի հիվքում ընկած է զուգադրական **մեթոդը**, ընդ որում, համեմատվում են ֆրանսերենի դարձվածակազմությանն առնչվող երեք միտումների արդյունքները: Այլ կերպ ասած, խոսքը **ներքին համեմատության** մասին է: Այս մեթոդը հնարավորություն է տալիս վերականգնելու ֆրանսերենի դարձվածակազմության ամբողջական շղթան՝ մենաբառույթացման արդյունքները համեմատվում են բազմաբառույթացման արդյունքների հետ, իսկ վերջիններս՝ դիպվածային փոխակերպումների: Վերջին գլխում կիրառվում է նաև **արտաքին համեմատության** մեթոդը, քանի որ դարձվածքների

դիպվածային փոխակերպումները քննվում են հայերեն համարժեքների լույսի ներքո:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, մատենագիտական ցանկից: Ատենախոսությանը կցված է հավելված, որտեղ ներկայացված են շուրջ հազար ֆրանսերեն դարձվածք, որոնք հին ֆրանսերենում եղել են մենաբառային:

Ներածության մեջ ներկայացվում են աշխատանքի թեման, արդիականությունը, նորությունը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ինչպես նաև տեսական ու գործնական արժեքն ու մեթոդաբանական ուղղվածությունը:

Աշխատանքի **առաջին գլխում**, որը վերնագրված է՝ «Ֆրանսերենի դարձվածաբանության պատմական զարգացման ընդհանուր բնութագիրը», քննարկվում են դարձվածքների ծագման ու զարգացման, բառի ու դարձվածքի հարաբերակցության և այլ հարցեր:

Ֆրանսերենի դարձվածքները սկիզբ են առնում նրա պատմության ամենավաղ շրջանից: Այդ իսկ պատճառով ֆրանսերենի դարձվածքների ծագման հարցի ուսումնասիրությունը ստիպում է մեզ դիմել ֆրանսերեն լեզվի սկզբնաղբյուրներին:

Ֆրանսերենը, լինելով ժամանակակից լեզու, լատիներենից ժառանգել է իր բառապաշարի ճնշող մեծամասնությունը: Մ. Կոննի նշած ստուգաբանական և վիճակագրական տվյալների համաձայն՝ XVII դարում լատինական ծագում ունեցող ֆրանսերեն բառերը կազմում էին ֆրանսերենի բառային ֆոնդի մոտ 95%-ը²: Այս տոկոսային հարաբերությունը ժամանակակից լեզվում, անշուշտ շատ ավելի ցածր է, սակայն, չպետք է մոռանալ, որ ֆրանսերեն նոր բառերի մի զգալի մասը (հատկապես գիտական տերմինները) այսօր էլ կազմվում է լատինական արմատներից կամ լատինական վերջածանցների և նախածանցների միջոցով: Մեզ հետաքրքրող խնդրի ուսումնասիրության համար ավելի կարևոր է հիմք ընդունել այն տվյալները, որոնք բնութագրում են ֆրանսերենի բառապաշարի վաղ շրջանի վիճակը:

Նենվելով Մ. Կոննի տվյալների վրա՝ կարելի է ենթադրել, որ ֆրանսերենի բառապաշարի նման դարձվածապաշարն առավելապես լատինական ծագում պետք է ունենար: Սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, բառերի ու դարձվածքների քանակի միջև, որոնք ֆրանսերենը ժառանգել է լատիներենից, գոյություն ունի զգալի տարբերություն, որով էլ պայմանավորված է լատինական ծագում ունեցող բառային և դարձվածային միավորների տեսակարար կշիռ տարբերությունը:

Ըստ կարևոր է նաև այն հանգամանքը, թե ինչքան է լատինական ծագում ունեցող ֆրանսերեն դարձվածքների տեսակարար կշիռը: Այս առումով արժեքավոր է Ա. Նազարյանի կողմից կատարված վիճակագրական հետազոտությունը՝ Պ. Կիտարի, Լ. Մարտելի, ինչպես նաև XX դարի երկրորդ կեսին լայն տարածում ստացած Մ. Ռայի դարձվածաբանական բառարանների հիման վրա: Նազարյանը ցույց է տալիս, որ, ի տարբերություն բառապաշարի,

² Տե՛ս **Cohen M.** Histoire d'une langue: le français. Paris, 1967, էջ 217:

ֆրանսերենի դարձվածապաշարում լատինական ծագում ունեցող դարձվածքների տեսակարար կշիռը բավականին ցածր է՝ 6,1%³ :

Ըստ Ա. Նագարյանի՝ լատինական ծագում ունեցող ֆրանսերեն դարձվածքների ցածր տեսակարար կշիռը կարելի է որոշ չափով բացատրել ֆրանսերենի դարձվածաբանության ազգային ինքնատիպությամբ:

Երևույթի պատճառները պետք է փնտրել նախ և առաջ լատիներենում, նրա դարձվածային համակարգի առանձնահատկություններում: Ռ. Ա. Բուդագովի հողվածում համոզիչ կերպով ցույց է տրված, որ լատիներենի (մասնավորապես՝ դասական շրջանի) բառակապակցությունները նվազ կայուն և ինքնուրույն էին, քան ժամանական լեզուների բառակապակցությունները⁴: Ռ. Բուդագովն իր մեկ այլ աշխատությունում գրում է. «Լատիներենի շարադասության ընդհանուր սկզբունքը (երբ խնդիր դրվում էր ստորոգյալից առաջ և հնարավոր էր դառնում նրա բաժանումը ստորոգյալից) նպաստավոր պայմաններ չէր ստեղծում կայուն բառակապակցությունների զարգացման համար»⁵: Այդ է պատճառը, որ «գրական լատիներենի համար ավելի բնորոշ է նախադասության մեջ բառերի կապակցությունը, քան բառակապակցությունը՝ որպես լեզվի առանձնահատուկ կառուցվածքաիմաստային միավոր»⁶, ինչը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ լատիներենի դարձվածակազմական հնարավորությունների վրա:

Սակայն որքան էլ լատիներենի շարահյուսական առանձնահատկությունները ազդած լինեին կայուն բառակապակցությունների կազմավորման գործընթացի վրա, այնուամենայնիվ, դրանք չեն կարող համարվել լատիներենում դարձվածքների սակավության միակ պատճառը:

Դարձվածքների մեծ մասն առաջանում է ժողովրդի առօրյա խոսքում: Այդ է պատճառը, որ դրանք լայնորեն ներկայացված են եղել լատիներենի ոչ թե գրական, այլ խոսակցական տարբերակում: Ռոմանագետների մեծ մասի կարծիքով ժողովրդական լատիներենը՝ որպես ընդհանուր ժողովրդախոսակցական լեզու, զոյություն է ունեցել լատիներենի պատմության բոլոր փուլերում, գործածվել է հասարակության բոլոր խավերի կողմից հռոմեական կայսրության ողջ տարածքում⁷, սակայն ժողովրդական լատիներենից կայուն բառակապակցությունների զանգվածային ներթափանցման հնարավորությունը ֆրանսերեն բացառվում է:

Նախ և առաջ՝ փաստերը ցույց են տալիս, որ բազմաթիվ դարձվածային միավորներից, որոնք գործածվել են Պլավտուսի, Տերենցիուսի, Պետրոնիուսի և ուրիշների կողմից, շատ քչերն են անցել ֆրանսերենին: Բացի այդ՝ հռոմեական

³ Տե՛ս **Назарян А.** Фразеология и лексика французского языка в их генетических отношениях // Вопросы языкознания, М., 1979, N4 էջ 123- 124 :

⁴ Տե՛ս Исследования в области латинского и романского языкознания. Кишинев, 1961, էջ 5-36:

⁵ Տե՛ս **Будагов Р.** Язык, история и современность. М., 1971, էջ 267:

⁶ Տե՛ս **Будагов Р.** նույն տեղում, էջ 280:

⁷ Տե՛ս **Корлэтыу Н.** Исследования народной латыни и ее отношений с романскими языками. М., Наука, 1974, 302с, էջ 81.

կայսրության տարբեր երկրների տարածքում գործածվող ժողովրդական լատիններնը տարբերվում էր ոչ միայն գրականից, այլև ընդհանուր ժողովրդախոսակցական լատիններենից, քանի որ ամեն երկրում ուներ իր ուրույն առանձնահատկությունները բոլոր ոլորտներում, այդ թվում և դարձվածաբանության ոլորտում: Գալիայում ժողովրդական լատիններենը զարգանում էր տեղական հենքի վրա (ենթաշերտի որոշակի ազդեցության տակ) և ավելի ու ավելի էր հեռանում գրական լեզվից՝ կուտակելով նոր որակի տարրեր, որոնք հիմք ստեղծեցին նոր լեզվի կազմավորման համար: Կասկածից վեր է, որ այդ լատիններեն ուներ իր դարձվածաբանությունը, հատկապես, մ. թ. III դարից հետո և գալլոռոմանական շրջանում (V–VII դդ.), որի մեծ մասը փոխանցվել է ֆրանսերենին: Բայց այդ դարձվածաբանությունը կարող ենք իրավամբ համարել բուն ֆրանսիական, քանի որ այն ծագել է ազգային հիմքի վրա՝ որպես որակական փոփոխությունների արդյունք, որոնք հանգեցրին ֆրանսերենի կազմավորմանը:

Զարգացման որոշակի ճանապարհ է անցել նաև ֆրանսերենի դարձվածագիտությունը:

Ը. Բալլիի դարձվածաբանական հայացքների ազդեցությամբ XX դարի երկրորդ կեսին թուս լեզվաբանության մեջ լայն տարածում է գտնում դարձվածքի և բառի համարժեքության տեսությունը: Այս տեսության կողմնակիցները դարձվածային միավորը համարում էին բառի տարակազմ տարբերակ: Նման մեկնաբանության տրամաբանական հետևանքը եղավ այն, որ ժխտվեց դարձվածաբանության՝ որպես ինքնուրույն լեզվաբանական գիտաճյուղի կարգավիճակը, և այն ընդգրկվեց բառագիտության մեջ՝ որպես նրա բաժիններից մեկը⁸:

Սակայն, երբ դարձվածաբանությունը XX դարի 60-ական թվականներից սկսեց ավելի ու ավելի հաստատվել լեզվաբանության մեջ որպես ինքնուրույն գիտաճյուղ, իսկ դարձվածաբանական երևույթների խորագրված ուսումնասիրությունը հանգեցրեց այն բանին, որ շատ գիտնականների կողմից դարձվածային միավորն սկսեց ընկալվել որպես առանձնահատուկ, նոր լեզվաբանական կազմավորում, ավելի ակնհայտ դարձավ դարձվածքի և բառի համարժեքության տեսության վիճելի բնույթը:

Ընդհանրապես, դարձվածաբանության և բառագիտության միջև սահմանները դեռևս որոշակիորեն ճշտված չեն. դարձվածքներն ի տարբերություն նախադասության, արտահայտում են իմաստ, այլ ոչ թե միտք: Սրանով նրանք մոտենում են բառերին: Մյուս կողմից, դարձվածքները հեռանում են բառերից իրենց բաղադրիչների քանակով, որը նրանց մոտեցնում է շարույթին, նախադասությանը: Ըստ երևույթին, չպետք է գնալ ծայրահեղությունների և փորձել բացարձակ ճշգրտությամբ սահմանել այնպիսի մի երևույթ, որն ինքնին դինամիկ է և գտնվում է անընդհատ շարժման մեջ :

Դարձվածքները կրում են զանազան կարգի փոփոխություններ՝ մի կողմից նույնանալով բառերի հետ, մյուս կողմից հեռանալով դրանցից:

Ֆրանսիական դարձվածագիտության զարգացման արդի փուլում որոշ լեզվաբանական աշխատություններում արձարծվում են դարձվածքի սահման-

⁸ Яковлевская А. Фразеология стихотворного языка Маяковского. Канд. дис, М. 1950, էջ 27.

ների, բաղադրիչների, կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունների հետ կապված խնդիրներ: Այս կարգի ուսումնասիրություններից պետք է հիշատակել Մ. Արիվեի, Ֆ. Գալմիչի Մ. Գալմիչի «*La grammaire d'aujourd'hui: guide alphabétique de linguistique française*» գիրքը⁹: Այս աշխատությունում կարդում ենք դարձվածքի հետևյալ սահմանումը. «Ըստ ավանդական քերականության՝ դարձվածքները բաղադրյալ բառեր են, որոնց բառային ամբողջականությունը, կարգավիճակը գրավոր չի արտահայտված: Այսպիսով, խոսվում է բայական, մակբայական, նախդրային և այլ դարձվածքների մասին»¹⁰:

Աշխատության հեղինակները ելակետային են համարում դարձվածքի կառուցվածքային և իմաստային ամբողջականության սկզբունքը: Անշուշտ, եթե դարձվածքը գնահատենք որպես որոշակի քանակությամբ բաղադրիչների ամբողջություն՝ միասնական կառուցվածք, ապա իմաստային պահում վերջինիս դիմաց կունենանք իմաստային ամբողջականություն: Սրանից չի բխում բնավ, թե խոսքը բառի մասին է: Ճիշտ է, դարձվածքները իրենց կառուցվածքային և իմաստային ամբողջականությամբ ունենում են բառային հոմանիշներ, սակայն դրանք բառեր չեն:

Աշխատության հեղինակները առանձին աղյուսակներով ներկայացրել են բառակապակցությունների հիմնական տեսակները: Աղյուսակներից մեկը վերաբերում է այսպես կոչված կառուցվածքային առումով մթագնած տարրերին՝ նախկին դարձվածքներին կամ բառակապակցություններին:

Այս դիտարկումները մեծ հետաքրքրություն են ներկայացնում դարձվածքների կազմավորման ամբողջական պատմությունը վերականգնելու տեսանկյունից: Ըստ էության, աշխատության հեղինակները քննության են առնում ***մենաբառայնացված դարձվածքները*** կամ ազատ կապակցությունները, որոնք դասակարգվում են ըստ որոշակի խմբերի:

Ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրություններում փորձ է արվում հստակեցնել դարձվածքի և բառապաշարային հարակից միավորների՝ բառի, բարդ բառի, ոչ դարձվածային կայուն բառակապակցության, ասացվածքի, առածի, իմաստայից կամ թևավոր խոսքի (աֆորիզմի) հարաբերակցության խնդիրը:

Մենք առանձնապես կարևոր ենք համարում դարձվածային միավորի սահմանազատումը հարակից ոչ դարձվածային կայուն բառակապակցություններից, քանի որ, դրանք, ունենալով ընդհանուր գծեր, ունեն նաև տարբերություններ:

Անժխտելի է այն փաստը, որ եթե յուրաքանչյուր դարձվածք կայուն բառակապակցություն է, ապա ամեն կայուն բառակապակցություն դարձվածք չէ: Եթե կայուն բառակապակցությունների բոլոր տեսակներին բնորոշ է կառուցվածքային կայունությունը և այն, որ դրանք ոչ թե կազմվում, այլ վերար-

⁹ **Arrivé M. Gadet F. Galmiche M.** La Grammaire d'aujourd'hui: guide alphabétique de linguistique française. Paris, 1986.

¹⁰ Նշվ. աշխ., էջ 383:

տաղրվում են խոսքի պահին, ապա առկա են նաև տարբերություններ, որոնք դարձվածքը որոշակիորեն սահմանազատում են ոչ դարձվածային կայուն բառակապակցությունից, և որոնցից հարկ ենք համարում հատկապես նշել հետևյալները.

ա) դարձվածքի բառ-բաղադրիչները ամբողջությամբ կամ մասնակիորեն կորցնում են իրենց անկախ իմաստային արժեքը, և դարձվածքի ամբողջական իմաստը չի բխում (կամ մասամբ է բխում) նրա բաղադրիչների իմաստների գումարից, ի տարբերություն ոչ դարձվածային միավորների. այսինքն՝ դարձվածքը չպատճառաբանված կամ մասնակիորեն պատճառաբանված լեզվամիավոր է,

բ) դարձվածքն օժտված է փոխաբերական-այլաբանական իմաստով ու պատկերավորությամբ, իսկ մյուս կայուն կապակցությունները՝ ոչ, քանի որ ունեն միայն անվանողական գործառույթ,

գ) ոչ-դարձվածային կայուն բառակապակցություններում գերադաս բաղադրիչը հաճախ կարելի է փոխել և ստանալ մեկ ուրիշ կայուն կապակցություն, իսկ դարձվածքի կազմում դա անհնարին է,

դ) վերջապես, ոչ դարձվածային կայուն բառակապակցությունները մեծամասամբ գոյականական կամ անվանական արժեք ունեն, մինչդեռ դարձվածային կապակցությունները կարող են լինել գոյականական, ածականական, բայական, մակբայական, կապական և այլ կառույցներ (տե՛ս էջ 65-70):

Ատենախոսության ***երկրորդ գլխում*** («Մենաբառայթացումը որպես ապադարձվածայնացման և բառակազմության հիմնական տարատեսակ») քննարկվում է *մենաբառայթացման* դարձվածքների կառուցվածքային և իմաստային խտացման, հարցը:

Ինչպես հայտնի է, դարձվածքը հակադրվում է նախադասությանը կամ ազատ բառակապակցությանը իր կազմի մեջ մտնող տարրերի իմաստի և քերականական կարգերի մթագնմամբ: Այլ կերպ ասած, ի տարբերություն նախադասության, դարձվածքը կազմում է ձևաիմաստային մեկ ամբողջություն:

Պակաս կարևոր չէ դարձվածքի և բառի կառուցվածքային-իմաստաբանական փոխհարաբերությունների հարցը: Որպես կանոն, դարձվածքի կազմի մեջ մտնում են մեկից ավելի բառեր, որոնք կառուցվածքային առումով միմյանցից տրոհված են: Ճիշտ է, դրանք հանդես են գալիս որպես իմաստային մեկ ամբողջություն՝ մասամբ կամ լիովին զրկված լինելով իրենց նախնական իմաստներից, սակայն կառուցվածքային տեսակետից պահպանում են իրենց ինքնուրույնությունը: Ամեն դեպքում կարող ենք ասել, որ դարձվածքը բառից տարբերվում է իր բաղադրիչների քանակով և կառուցվածքային ինքնուրույնությամբ: Հետագա զարգացման ընթացքում դարձվածքի կազմի մեջ մտնող բառերը հաճախ ձուլվում են իրար և կորցնում ինքնուրույնությունը: Այլ կերպ ասած, տեղի է ունենում մենաբառայթացում՝ դարձվածքը վերածվում է բառի:

Գրավոր աղբյուրների ոչ բավարար քանակը, ինչպես նաև ժողովրդական լատիներենի բառարանների բացակայությունը դժվարացնում են խնդրի ամբողջական ու համակողմանի ուսումնասիրությունը: Մասնավորապես, մինչև օրս պարզաբանված չեն մենաբառայթացման՝ բազմաբառայթ միավորի

խտացման առանձնահատկությունները: Եթե մեզ ընդհանուր գծերով պարզ է դարձվածակազմության փոքրիշատե ամբողջական պատկերը, ապա նույնը չենք կարող ասել հակառակ գործընթացի մասին, քանի որ երևույթին նվիրված առանձին հետազոտություններ չկան:

Որպեսզի ստանանք մենաբառայացված դարձվածքների թեկուզ մոտավոր թվաքանակը, անհրաժեշտ է մեկ առ մեկ քննել ֆրանսերենի բոլոր բաղադրյալ բառերը և պարզել, թե դրանցից քանիսն են նախկինում եղել բազմաբառայոթ միավորներ: Վաշվի առնելով նման աշխատանքի մեծ ծավալները, սահմանափակվում ենք միայն որոշ լամբերի քննությամբ, որոնցում առավել ցայտուն են դրսևորվում դարձվածք-մենաբառայոթ զարգացման օրինաչափությունները:

Այս գլխում ներկայացվում են այն մենաբառայոթները, որոնք ձևավորվել են ֆրանսերենի պատմական զարգացման ընթացքում: Նման մենաբառայոթների թվին են դասվում հատկապես նախդրավոր կազմությունները:

Արդի ֆրանսերենի կայուն բառակապակցությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց զգալի մասը կազմված է զանազան նախդիրներով ու նախածանցներով: Ատենախոսության մեջ մենք դիտարկել ենք մենաբառայոթացման վեց տարբերակ, որոնք կազմվել են *à, con- (com-), en, entre, par, pour* նախդիրներով ու նախածանցներով: Այս գործընթացի ընդհանուր օրինաչափությունն այն է, որ ազատ կամ կայուն բառակապակցությունների բաղադրիչները ձուլվում են և վերածվում մենաբառայոթների: Ընդ որում, *դարձվածքներից ծագած մենաբառայոթները աչքի են ընկնում իրենց իմաստների առավել լիակատար մթագնմամբ և համապատասխանում են իսկական բարդություններին*, մինչդեռ ազատ կապակցություններից ծագած մենաբառայոթները դեռևս պահպանում են բաղադրիչների առանձին իմաստները, որոնցով մոտենում են անիսկական բարդություններին: Իրենց հետագա զարգացման ընթացքում նոր ձևավորված մենաբառայոթները համարվում են նոր տարրերով և կրկին վերածվում կայուն կամ ազատ կապակցությունների:

Ֆրանսերենում *à* նախդիրը աչքի է ընկնում լայն գործածականությամբ, և բառակազմության մեջ թերևս ամենաարդյունավետն է: Չխորանալով *à* նախդիրի գործառական առանձնահատկությունների մեջ, ներկայացնենք դրանով կազմված մի քանի արտահայտություն.

à la fois — միանգամից

à la dérobée — ծածուկ

à l'issue de — արդյունքում

Բերված օրինակներում *à* նախդիրը գործածվում է մյուս բաղադրիչներից առանձին, անջատ, և այս առանձնահատկությունն էլ հենց բազմաբառայոթ տարրերում է մենաբառայոթից՝ տվյալ դեպքում իսկական բարդություններից:

Սակայն լեզվի զարգացման հետագա փուլերում *à* նախդիրը ձուլվում է իրեն հաջորդող բաղադրիչին և կազմում մենաբառայոթ:

Ապադարձվածայնացման կամ մենաբառայոթացման այս երևույթը հաստատվում է բազմաթիվ օրինակներով: Նշենք դրանցից մի քանիսը՝

abaisser v. (*à et baisser*) իջնցնել

abandon n. m. (de l'a. fr. *à bandon*) հրաժարում

abasourdir v. (à et *basourdir* “tuer”) խլացնել

Նմանատիպ օրինակները բավականին մեծաքանակ են: Կառուցված-բային տեսակետից դրանց հիմնական մասն արտահայտում է պատճառականի իմաստ և համապատասխանում է հայերեն *ացն, եցն, ցն* միջածանցներով կազմված ձևերին:

abaisser — իջեցնել

abasourdir — խլացնել

Հայտնի է, որ պատճառականի իմաստը կարող է արտահայտվել նաև վերլուծական եղանակով. ֆրանսերենում այդ գործառնությունը օժտված է *faire* բայը, իսկ հայերենում՝ *տալ*-ը: Սրանից բխում է, որ բերված կազմությունները իմաստային-գործառնական առումով համապատասխանում են հետագա շրջանում *faire* բայով կազմված վերլուծական միավորներին:

Այս տեսակետից ուշագրավ է *accroire* — «ստիպել հավատալ, մոլորության մեջ գցել» բայը, որը սկզբնապես լինելով ազատ կապակցություն՝ *à* և *croire*, ու արտահայտելով պատճառականի իմաստ, հետագայում սկսել է գործածվել *faire* բայի հետ՝ վերածվելով այսպես կոչված «կրկնակի պատճառականի»: Այլ կերպ ասած *accroire* բայի մեջ մթազնել է պատճառականի նախկին իմաստը և ձևավորվել *faire accroire* պատճառականի վերլուծական ձևը:

Եթե բերված մեծաքանակությունը համեմատենք *à* նախդիրով կազմված բազմաբառայինների հետ, ապա կնկատենք, որ տվյալ դեպքում մեծաքանակության և բազմաբառային միջև տարբերությունը հանգում է բացառապես շարային միասնականությանը: Նախդրավոր կառույցներում նախդիրները գրվում են բառից առանձին, քանի որ դրանց և բառերի միջև գոյություն ունի դադար, և երբ այդ դադարը վերանում է, վերանում է նաև բազմաբառային-մեծաքանակային հավաքությունը:

Այս օրինակները վեր են հանում ֆրանսերենի բառակազմության և դարձվածակազմության մեկ այլ առանձնահատկություն ևս: Ինչպես ցույց են տալիս *abaïsser, abonner, accrocher, acharner* և այլ օրինակներ, *à* նախդիրն ունի բառակազմական երկակի գործառնություն: Այն մի կողմից հանդես է գալիս մեծաքանակային ցուցված տարրի կազմում որպես վերջինիս առաջին բաղադրիչ, մյուս կողմից կրկնվում է (շարահյուսական մակարդակում) նույն մեծաքանակային հետո՝ *s'abaïsser à, s'abonner à* : Ստացվում է, որ *à* նախդիրը երկու կողմից «օղակում է» այս կամ այն բառը՝ մի դեպքում հանդես գալով ձուլված տեսքով, մյուս դեպքում պահպանելով իր հիմնական գործառնությունը:

Մեծաքանակայինացումը բառակազմական երևույթ է և, ըստ էության, «բարդություն» բառի հոմանիշն է: Երկու դեպքում էլ երկու կամ ավելի բառեր միանում են իրար և վերածվում բարդության կամ մեծաքանակային:

Ատենախոսության *նորորդ գլուխը*, որը վերնագրված է՝ «Բազմաբառայինացում կամ դարձվածակազմություն», նվիրված է բազմաբառայինացման որոշ առանձնահատկությունների քննությանը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ շատ հասկացություններ, որոնք ֆրանսերեն լեզվի զարգացման սկզբնական փուլում արտահայտվել են ամբողջական բառային միավորով (մեծաքանակով), հետագայում արտահայտվել են

բառակապակցություններով, որոնց հիման վրա շատ դեպքերում կազմվել են դարձվածքներ:

Ժամանակակից ֆրանսերենում ավելացել է նմանատիպ հասկացությունները վերլուծաբար արտահայտող բառակապակցությունների տեսակարար կշիռը, և հաճախակի է դարձել դրանց գործածությունը:

Ֆերդինանդ Բրյունոն՝ իր «Ֆրանսերենի պատմության»¹¹ առաջին հատորում, վկայում է, որ բազմաթիվ ամբողջական բառեր փոխարինվել են շրջասական դարձվածներով, ինչպես օրինակ՝

avoier — mettre sur la voie

empiegier — prendre au piège

ennoitier — commencer à faire nuit և այլն:

Ֆերդինանդ Բրյունոյի բերած օրինակները հաստատում են ֆրանսերենում դարձվածակազմության միտումների շարունակականությունը, քանի որ նրա նշած ամբողջական բառերը, որոնք փոխարինվել են դարձվածքներով, նախկինում՝ *նախքան մենաբառայթի վերածվելը*, նույնպես եղել են *դարձվածքներ* կամ *բազմաբառայթներ*: Ճիշտ է, դրանք կազմված են տարբեր նախդիրներով, սակայն ընդհանուր միտումն ավելի քան ակնհայտ է:

Ընենք այդ օրինակներից մի քանիսը՝

1. **avoier** — «ուղու վրա դնել»․ ներկայացնում է *à + voier* բազմաբառայթի խտացված տարբերակը, ընդ որում *mettre sur la voie* դարձվածային տարբերակում *mettre sur* կապակցությունը փոխարինում է *à* նախդիրին:

2. **empiegier** — «թակարդով բռնել»․ նկատելի է *en* նախդիրի առկայությունը, որը հաջորդ *p* -ի ազդեցությամբ վերածվել է *em* -ի, բառացի նշանակում է «թակարդի մեջ առնել»․ *en* նախդիրին համապատասխանում է *prendre au* կապակցությունը:

3. **ennoitier** — «նիջնել, մութն ընկնել»․ կազմված է *en* նախդիրի հիմքի վրա և համապատասխանում է հայերեն «գիշերանալ, մթնել» ձևերին․ *commencer à faire nuit* դարձվածքը *en* նախդիրի փոխարեն ունի երեք տարր՝ *commencer à, faire, nuit*, որոնցից վերջինը փոխարինում է *ennoitier* բայի *ier* կազմիչին:

Բրյունոյի ցանկում բերված 38 օրինակներից 14-ն անցել են մեզ ծանոթ ճանապարհով՝ բազմաբառայթից վերածվելով մենաբառայթի, իսկ հետագայում՝ մենաբառայթից բազմաբառայթի: Դիտարկված մենաբառայթներում մեծ դեր են խաղում բայական կազմիչները, որոնք դարձվածքներում կամ ազատ կապակցություններում փոխարինվում են առանձին բայերով, ինչպես օրինակ՝ **avoier** — mettre sur la voie, **empiegier** — prendre au piège և այլն:

Բրյունոյի ներկայացրած բազմաբառայթներից ոչ բոլորն են դարձվածքներ: Այսինքն՝ ըստ էության, Բրյունոն ցույց է տվել մենաբառայթ-բազմաբառայթ զարգացման ճանապարհը՝ առանց տարբերակելու դարձ-

¹¹ **Brunot F.** Histoire de la langue française, Tome I (De l'époque latine à la Renaissance). Paris, 1905, p.144.

վածքներն ազատ կապակցություններից: Այս դեպքում՝ կարող ենք խոսել ամբողջական բառային միավորների՝ բազմանդամ հոմանիշներով փոխարինվելու մասին:

Ասվածը հաստատվում է նաև հին ֆրանսերենի բառարանների տվյալների վերլուծությամբ, որը մենք կատարել ենք երկու բառարանների հիման վրա, այն է՝ Մ. Ա. Բորդյանայի, Մ. Վ. Գորդինայի, Վ. Ֆ. Շիշմարյովի «Հին ֆրանսերենի բառարան»¹² և Ա. Ժ. Գրեյմասի «Հին ֆրանսերենի բառարան»¹³:

Հենվելով Բրյունոյի և վերը նշված հեղինակների բերած փաստական նյութի վրա, ֆրանսերենում բազմաբառայացման ընդհանուր միտումները պարզելու նպատակով կազմել ենք համապատասխան ցանկ, որը պարունակում է հին ֆրանսերեն շուրջ հազար մենաբառայթ, որոնք արդի ֆրանսերենում արտահայտվում են բազմանդամ հոմանիշների կամ բազմաբառայթների միջոցով (տե՛ս հավելվածը):

Ինչ խոսք, այդ ցանկն ամբողջական չէ, սակայն հաշվի առնելով նաև այլ հեղինակների կողմից կատարված ուսումնասիրությունները, կարելի է վերհանել որոշ օրինաչափություններ:

1. Ձուտ քանակական տեսանկյունից չի կարելի այդ հազար օրինակը համեմատել ֆրանսերենի նախագրային շրջանի տվյալների հետ. այստեղ կարող ենք միայն փաստել, որ բազմաբառայացման միտումը ֆրանսերենում դարձել է բավականին արդյունավետ: Չպետք է մոռանալ, որ վերջին հաշվով ֆրանսերենը բնորոշվում է իր վերլուծական տարրերի առատությամբ: Լատիներենի թեքականությունը ֆրանսերենում վերածվել է վերլուծակա- նության, և այս ընդհանուր միտումն իր կնիքն է դրել նաև ֆրանսերենի դարձվածակազմության վրա:

2. Ուշագրավ է այն հանգամանքը, որ շատ հաճախ մենաբառայթի բաղադրիչները կրկնվում են բազմաբառայթի կազմում և, եթե նկատի ունենանք, որ այդ մենաբառայթները հնում եղել են բազմաբառայթներ, ապա կնկատենք, որ *միևնույն տարրը մի դեպքում նպաստում է մենաբառայթի, մյուս դեպքում՝ բազմաբառայթի ձևավորմանը*: Այս երևույթներն անշուշտ տարերային են, սակայն օրինաչափ է լեզվի մի վիճակից մյուսին անցնելը:

4. Պակաս ուշագրավ չէ ցանկում ներկայացված բառերի խոսքիմասային պատկանելությունը. դրանց թվում գերակշռում են բայերը՝ 703, գոյականները՝ 177, անհամեմատ ավելի քիչ են մյուս խոսքի մասերը՝ մակբայներ՝ 44, ածականներ՝ 42, նախդիրներ՝ 10, կապ՝ 1:

Ատենախոսության *չորրորդ գլուխը*, որը վերնագրված է՝ «Իպվածային փոխակերպումներ», նվիրված է դիպվածային փոխակերպումների և դրանց թարգմանության հետ կապված որոշ հարցերի քննությանը:

Դարձվածքների դիպվածային փոխակերպումները ոչ այլ ինչ են, քան դրանց խոսքային-բառաքերականական զարգացումներ, որոնք կրում են

¹² **Бородина М. Гордина М. Пешмарев В.** Словарь старофранцузского языка. М.-Л., 1955.

¹³ **Greimas A.** Dictionnaire de l'ancien français. Paris, 1968.

անհատական-հեղինակային բնույթ, սակայն չեն խախտում դարձվածային միավորի իմաստային ամբողջականությունը:

Կարելի է ասել, որ դարձվածքների դիպվածային փոխակերպումները հիմնականում առնչվում են ռճաբանությանը: Փաստորեն, ցանկացած անհատ կարող է իր խոսքում դարձվածքները ենթարկել ինչ-ինչ փոփոխությունների: Այստեղ էական դեր չեն խաղում դարձվածքի իմաստային ամբողջականությունն ու կառուցվածքային կայունությունը. պարզապես խոսողին չի բավարարում տվյալ դարձվածքի արտահայտչականությունը կամ պատկերավորությունը, ուստի անհրաժեշտություն է առաջանում գործածել ուժգնացնող միջոցներ: Սրանից էլ ինքնըստինքյան բխում է այն եզրակացությունը, որ անհնար է փոքրիշատե հստակ չափանիշներով կատարել դիպվածային փոխակերպումների դասակարգում:

Ակնհայտ է, որ կատարվող դասակարգումները պետք է հենվեն որոշակի չափանիշների վրա, որոնք դարձվածքի պարագայում պետք է կապված լինեն կամ իմաստի կամ կառուցվածքի հետ: Իմաստային չափանիշներով դասակարգումը կարելի է ասել գրեթե անհնար է, քանի որ չի կարելի հաշվել բոլոր այն իմաստային նրբերանգները, որոնք դարձվածքները ստանում են դիպվածային փոխակերպումների ենթարկվելիս: Այլ բան է կառուցվածքային չափանիշների վրա հիմնված դասակարգումը, այստեղ ինչ-որ չափով կարելի է փորձ անել առանձնացնելու որոշ օրինաչափություններ :

Դարձվածքների դիպվածային փոխակերպումների դասակարգման կամ խմբավորման հարցի ուսումնասիրությունն ունի գործնական նշանակություն: Եթե որևէ հեղինակ իր ստեղծագործության մեջ օգտագործում է դիպվածային փոխակերպման ենթարկված դարձվածքներ, ապա այդ երկր թարգմանելիս անհրաժեշտություն է առաջանում մշակել թարգմանության որոշակի սկզբունքներ և մոտեցումներ: Ըստ այդմ, կարևոր է նախ պարզել ֆրանսերենում նման փոխակերպումների առանձնահատկությունները, վերհանել դրանց հիմնական տարատեսակները և նոր միայն ստացված արդյունքներն օգտագործել թարգմանություններ կատարելիս:

Սրանով բնավ չենք ուզում ասել, թե ֆրանսերենում գործածված դիպվածային փոխակերպումները պետք է անհրաժեշտաբար հայերենում փոխարինվեն նույնանման կառուցվածքներով. ամեն մի դարձվածք և ամեն մի դիպվածային փոխակերպում պահանջում է առանձնահատուկ մոտեցում կախված ինչպես համատեքստից, այնպես էլ երկու լեզուների միջև քերականական կառուցվածքների տարբերություններից և ընդհանրություններից:

Սակածից հետևում է, որ չեն կարող գոյություն ունենալ կամ առաջարկվել դիպվածային փոխակերպումների թարգմանության համընդհանուր կաղապարներ կամ մեթոդներ:

Չնայած այս դժվարություններին, արդեն կատարվել են որոշ փորձեր և ձևավորվել են դիպվածային փոխակերպումների դասակարգման ինչ-ինչ սկզբունքներ և մոտեցումներ: Այս հարցերին առավել հանգամանալից կերպով

անդրադարձել է ճանաչված ժամանագետ Ա. Նազարյանը¹⁴: Ամենևին չհավակնելով սպառիչ լինելու՝ Ա. Նազարյանը ֆրանսերենի դիպվածային փոխակերպումները դասակարգել է ըստ 17 հիմնական խմբերի՝ հենվելով դարձվածքների կառուցվածքային առանձնահատկությունների վրա:

Հենվելով Ա. Նազարյանի կատարած դասակարգման վրա, մենք փորձել ենք գեղարվեստական գրականությունից դուրս գրել դարձվածքների դիպվածային փոխակերպումների մի շարք նմուշներ և պարզել, թե ինչպես են դրանք արտացոլված հայերեն թարգմանություններում: Ցանկում ներկայացված է շուրջ երեք տասնյակ դիպվածային փոխակերպում, որոնք արդեն իսկ թարգմանված են հայերեն և հնարավորություն են տալիս վերհանելու ինչ-ինչ օրինաչափություններ: Վերլուծելով այդ օրինակները կարող ենք ասել, որ դիպվածային փոխակերպումների թարգմանությունը շատ հաճախ դեմ է առնում մեծ դժվարությունների: Եթե ելակետ ունենանք դիպվածային փոխակերպման կառուցվածքի և իմաստի ամբողջականությունը, ապա միայն հազվադեպ կարելի է հասնել թարգմանության համարժեքության, քանի որ անհնար է թարգմանության ժամանակ կիրառել փոխակերպման նույն եղանակը: Ըստ այդմ, այս կարգի թարգմանությունների ժամանակ պետք է ելակետ ընդունել առաջին հերթին դարձվածային իմաստը և արտահայտչականությունը: Եվ, եթե հաջողվում է դրանք փոքրիչատե հարազատորեն վերարտադրել, ապա փոխակերպման կառուցվածքային համապատասխանությունը այլևս էական չէ:

Եզրակացության մեջ ամփոփվում են աշխատանքի հիմնական արդյունքները.

1. Ֆրանսերենի դարձվածագիտության մեջ գերիշխում է դարձվածքի և բառի նույնացման տեսությունը, որի կողմնակիցներից է նաև Շ. Բայլին: Այս մոտեցման կողմնակիցները հենվում էին բացառապես *դարձվածքի և բառի իմաստային ընդհանրության վրա*: Նրանց կարծիքով դարձվածքը, փաստորեն, ընկալվում էր որպես բառի տարակազմ տարբերակ: Սույն տեսակետը մեզ համար ընդունելի չէ, քանի որ բառն ու դարձվածքը՝ շփման եզրեր ունենալով հանդերձ, լեզվական տարբեր միավորներ են:

2. **Ֆրանսերենի դարձվածակազմությունը դիտարկելով որպես միասնական և շարունակական գործընթաց, կարելի է խոսել վերջինիս երեք հիմնական դրսևորումների մասին՝ մենաբառայնացում, բազմաբառայնացում և դիպվածային փոխակերպումներ:**

3. Ֆրանսերենի դարձվածակազմությանն առնչվող կարևոր երևույթ է *մենաբառայնացումը*, որի արդյունքում *դարձվածքի բաղադրիչները ձուլվում են միմյանց և կազմում նոր բառ*: Այսինքն՝ դարձվածքը իր իմաստային ամբողջականությանը զուգահեռ ձեռք է բերում նաև կառուցվածքային ամբողջականություն: Այս երևույթը բնորոշելու համար *մենաբառայնացում* բառի փոխարեն կարելի է գործածել նաև *ապադարձվածայնացում* եզրույթը, քանի որ բառի վերածվելով դարձվածք դադարում է դարձվածք լինելուց: Ընդ որում, մենաբառայնացումը բուն դարձվածակազմության հետ առնչվում է

¹⁴ Назарян А. Фразеология современного французского языка. М., Высшая школа, 1987, էջ 243:

այնքանով, որ ցույց է տալիս դարձվածքի կառուցվածքային և իմաստային զարգացման որոշակի փուլը: Այս եղանակով տեղի է ունենում դարձվածքի կառուցվածքի և իմաստի խտացում, որի հետևանքով ձևավորվում է նոր բառ, որը հետագայում այլ բառերի հետ միանալով կարող է կրկին վերածվել դարձվածքի: Այլ կերպ ասած՝ *մենաբառայթացումը* մի կողմից դարձվածքի ձևաիմաստային զարգացման վերջին փուլն է, մյուս կողմից դառնում է հույժ նոր դարձվածքի ձևավորման համար: Հենց սա է դարձվածակազմական գործընթացի շարունակական բնույթը, որով էլ պայմանավորված են դարձվածակազմության զարգացման միտումները ֆրանսերենում:

4. *Բազմաբառայթացումն* իր էությանբ հակադրվում է *մենաբառայթացմանը* և, եթե մենաբառայթացման արդյունքում դարձվածքը դադարում է դարձվածք լինելուց, ապա կարելի է ասել, որ իսկական դարձվածակազմությունը սկսվում է հենց բազմաբառայթացումից: *Տարբեր բառեր և լեզվատարրեր կարող են միանալ իրար և կազմել դարձվածք*, և շատ դեպքերում, այդ դարձվածքի բաղադրիչները, որոնք տվյալ դեպքում հանդես են գալիս որպես առանձին բառեր, նախկինում նույնպես եղել են դարձվածքներ, որոնք հետագայում վերածվել են մենաբառայթացի: Ըստ էության, կարող ենք ասել, որ *դարձվածքի կազմում շատ հաճախ ունենք մի շարք խտացված և մենաբառայթացի վերածված դարձվածքներ*:

5. *Դիպլոմատային փոխակերպումները* նույնպես դարձվածակազմական երևույթներ են, որոնք, սակայն, պատահական բնույթ ունեն և դրսևորվում են որոշակի համատեքստում: Դրանք մենաբառայթացումից և բազմաբառայթացումից տարբերվում են նրանով, որ չունեն հստակ օրինաչափություններ: *Դիպլոմատային փոխակերպումները դարձվածքների պատահական փոփոխություններն են, որոնց արդյունքում դարձվածքը կարող է միջարկվել նոր տարրերով, կրճատել իր կառուցվածքը կամ էլ ենթարկվել կառուցվածքային այլ փոփոխությունների՝ պահպանելով իմաստային ամբողջականությունը*: Եթե *մենաբառայթացումը* բնորոշ է լեզվի ընդհանուր զարգացմանը, իսկ *բազմաբառայթացումը* դրա հաջորդ փուլն է՝ տրամաբանական շարունակությունը, ապա *դիպլոմատային փոխակերպումները* աչքի են ընկնում իրենց արտակարգ բազմազանությամբ և տարատեսակությամբ: Եվ, եթե նախորդ երկու միտումներին բնորոշ է հստակ ուղղվածությունը՝ դարձվածքի կառուցվածքի խտացում, իսկ այնուհետև նոր դարձվածքի ձևավորում, ապա *դիպլոմատային փոխակերպումներում* կարող են դրսևորվել այս երկու երևույթները միաժամանակ: Վերջին հաշվով, դարձվածքի տարրերի կրճատումը նույնպես նրա կառուցվածքի խտացման տարատեսակ է, իսկ նոր տարրերի ներմուծումը՝ ընդարձակման:

6. Գեղարվեստական գրականության թարգմանություններից քաղված օրինակների քննությունը վեր է հանում մի շարք ուշագրավ օրինաչափություններ: Այսպես, շուրջ երեք տասնյակ դիպլոմատային փոխակերպումների մեծ մասը դիտվում է իբրև դարձվածքի կազմում «օտար» տարրերի ներմուծում: Հայերեն թարգմանություններում դրանք փոխարինվել են այլ կազմություններով, քանի որ, ի տարբերություն ֆրանսերենի, հայերեն համապատասխան դարձվածքները իրենց կառուցվածքով ավելի պակաս տրոհելի են և դժվարու-

թյամբ են ընդունում նոր տարրեր: Դիպվածային փոխակերպումների ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ դարձվածակագմության մեջ գործում են նույն երևույթներն ու օրինաչափությունները, որոնք առկա են հենչունաբանության և բառակազմության մեջ:

Այս գործընթացը շարունակական է և ոչ մի պահ չի ընդհատվում. լեզուն իր ընդհանուր զարգացման մեջ հետևում է որոշակի օրինաչափությունների և կրում զանազան փոփոխություններ, որոնք կարող են տեղի ունենալ միաժամանակ:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Հին ֆրանսերենի ամբողջական բառային միավորների բազմանդամ հոմանիշության հարցի շուրջ // Կանթեղ, N 2, Երևան, Ասողիկ հրատ., 2003, էջ 59-65:

2. Դարձվածքների և ազատ կապակցությունների մենաբառայնացման առանձնահատկությունները ֆրանսերենում // Ռոմանական բանասիրության հանդես, N 3, Երևան, Ասողիկ հրատ., 2005, էջ 139-155:

3. Բազմաբառայնացումը որպես դարձվածակազմության հիմնական դրսևորում // Կանթեղ, N 4, Երևան, Ասողիկ հրատ., 2011, էջ 80-86:

4. Դարձվածքների դիպվածային փոխակերպումների դասակարգման առանձնահատկությունները // Գիտական հոդվածների ժողովածու: Ֆրանսիական բանասիրության և ֆրանսերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի, դասավանդման արդիական խնդիրներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 81-88:

5. Դարձվածքների ծագման հարցը ֆրանսերենում // Ռոմանական բանասիրության հանդես, N 10, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 172-177:

МЕЛКОНЯН НАИРА ИШХАНОВНА

**ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ФРАЗООБРАЗОВАНИЯ ВО
ФРАНЦУЗСКОМ ЯЗЫКЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук
по специальности 10.02.08. “Романские языки”

Защита состоится 15 апреля 2015г. в 11:00 на заседании
специализированного совета 009 -“Иностранные языки” ВАК РА при
Ереванском государственном университете

Резюме

Реферируемая диссертация посвящена исследованию **основных тенденций фразообразования во французском языке**. Фразеологизмы, как употребляемые в речи готовые единицы, постоянно подвергаются изменениям, зависящим от контекста и стилистических факторов. Однако существуют общие закономерности, связанные с развитием языка и обуславливающие основные тенденции фразообразования.

Актуальность темы прежде всего обусловлена вышеуказанными обстоятельствами. Тема актуальна еще и в том плане, что фразообразование во французском языке изучается на фоне исторического развития, благодаря чему четко очерчиваются современное состояние и перспективы развития.

Предметом исследования являются фразеологизмы французского языка в широком охвате. В этом ключе были рассмотрены не только полностью или частично переосмысленные словосочетания (собственно фразеологизмы), но и устойчивые глагольные и именные словосочетания с целью изучить материал с всех сторон и сделать работу более цельной.

Материал исследования, в основном, составляют:

1. Около 150 отдельных лексикализованных сочетаний (сращений), которые прежде были фразеологизмами.
2. Около 1000 цельных языковых единиц (лексикализованных сочетаний) старого французского и их многокомпонентные синонимы в современном французском, которые в работе представлены как приложение.
3. Около трех десятков фразеологизмов, подвергшихся окказиональным трансформациям.

Примеры почерпнуты из лексикографических источников, художественной литературы, прессы, работ, посвященных фразеологии.

Цель работы – выявить в диахронии, классифицировать и истолковать закономерности основных тенденций фразообразования во французском языке: **лексикализации, дефразеологизации и окказиональных трансформаций**, которые не разделены и составляют единое целое.

Новизна работы заключается в выявлении взаимосвязи тенденций фразеобразования во французском языке. Впервые **лексикализация, дефразеологизация и окказиональные трансформации** рассматриваются как отдельные элементы процесса фразеобразования, дается их определение и толкование, подтвержденное достаточным количеством примеров. Фразеобразование рассматривается в диссертации в рамках общих процессов словообразования, показана последовательность развития соотношений *слово – фразеологизм* и *фразеологизм – слово*.

Исследование имеет **теоретическое значение**. Изучение тенденций фразеобразования во французском языке с новых аспектов выдвигает серьезные теоретические вопросы, связанные с особенностями формирования и развития фразеологизмов. Если рассматривать фразеологизм как разнокомпонентный вариант слова, выражающий значение и состоящий из ряда составляющих частей, то в ходе последующего развития его структурная целостность может сжаться, срастись, вследствие чего он трансформируется в слово. Следовательно, в теоретическом плане крайне важно выявление общей картины развития соотношений *фразеологизм – слово* и *слово – фразеологизм* во французском языке.

Практическое значение работы состоит в обнаружении структурных и семасиологических особенностей фразеологизмов. Кроме того, в последней главе диссертации рассматриваются окказиональные трансформации французских фразеологизмов и дается толкование их переводов на армянский язык. Таким образом, выявляются также особенности перевода французских фразеологизмов на армянский язык.

Работа может быть полезна для переводчиков, для тех, кто занимается вопросами французской и армянской фразеологии, может быть использована в курсах по лексикологии и теории перевода, а также в лексикографии.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка использованной литературы. К диссертации имеется приложение, где представлено около тысячи французских фразеологизмов, которые в старом французском существовали как лексикализованные сочетания.

The Main Tendencies of Idiom formation in Modern French

Summary

The present research is devoted to the study of the main tendencies of French idiom formations. The given issue has not been elucidated sufficiently in academic literature. Linguists generally treat idioms as set linguistic units, trying to distinguish the latter from other linguistic elements. It is true, that in many cases the idiom has been identified with the word, or considered as a unit, being structurally different from word. However, the final definition of idiom can extend or narrow, depending on the nature of the set word combination. Enough attention has not been paid to the characteristics of semantic, structural developments of idioms in the frame of academic literature; as a result idiom formation hasn't been viewed as a whole chain. In the present research it becomes evident that idiom formation and its developments follow certain rules, regulations.

Idioms, being readily reproduced units of speech, constantly undergo certain changes, depending on the context and stylistic factors. However, there exist some general regularities that are connected with language development and which determine the main tendencies of idiom formations.

The **topicality** of the research is determined by the abovementioned factors. The topic can also be seen innovative as the French idiom formation is examined in terms of its historical development, due to which its current status and perspectives are clearly outlined.

For complete and embrative research, the focus is put not only on set word combinations (namely, idioms) that have undergone partial or complete semantic changes but also on verbal and nominal set word combinations.

The factual data consist of

1. About 150 monolexemes that were former idioms.
2. About 1000 integral word units of old French and their corresponding Modern French synonyms which are introduced in the appendix of the research paper.
3. About 30 idioms which have undergone occasional transformation.

The **aim** of the research is to discover, classify and comment on the main tendencies of the French idiom formation diachronically, namely, highlight the characteristics of idioms that are lexicalized or are converted into multilexemes, and to examine the properties of occasional transformations. The latter have not been distinguished from one another and have so far been treated as one integral unit.

The **novelty** of the research paper is to reveal the interrelatedness of the tendencies in the process of French idiom formation. For the first time the lexicalization, the conversions of words into multilexemes as well as occasional transformations are seen as separate elements in the process of idiom formation. Their definitions and interpretations are supported by sufficient factual data. In the research

paper the idiom is viewed within the scope of general word formation. The developments of the succession between word→idiom and idiom→word are highlighted.

The **theoretical** value of the research work is determined by the fact that the study of tendencies in the idiom formation has been carried out from a new angle where serious theoretical issues have been put forward, concerning the main characteristics and developments of idiom formation. Idiom is seen as a structurally different variety of the word, expressing a certain meaning and consisting of several components. Throughout its further development the structural integrity of idiom can be densified due to which idiom transforms into a word. Thus, in terms of theoretical value it is essential to highlight the complete description of the idiom→word and word→idiom developments.

The **practical value** is provided by the description of the structural and semantic characteristics of idioms. In the last chapter of the research work the occasional transformations of French idioms are elucidated and the characteristics of their Armenian translations are introduced and analyzed. In other words, the characteristics of the corresponding Armenian translations of French idioms are revealed. The research can be valuable for translators, for researchers who focus on the study of Armenian and French idioms, and can be used in courses on lexicology, the theory of translation and lexicography.

The comparative method is the underlying method of the present research paper, where three tendencies of French idiom formations are contrasted. In other words, internal comparison is carried out. This method enables us to reconstruct the whole chain of the French idiom formation, namely the results of lexicalization and the conversion of idioms into multilexemes are contrasted while the latter in their turn are compared with occasional transformations.

A handwritten signature in cursive script, possibly reading 'A. M. S.', located in the lower right quadrant of the page.